Mais vous ne vous contentez pas de bien écrire et d'appeler par vos œuvres l'intérêt du monde civilisé sur l'Arménie; vous travaillez encore, avec votre savant frère le vartabed Ambroise Calfa, et sous la direction paternelle de notre illustre et vénéré vartabed le père Théodore Sarkis, qui a tant souffert pour l'amour de sa nation; vous travaillez à élever, ici à Paris, une jeune colonie d'enfants Arméniens, destinés à porter un jour avec eux dans l'Orient les arts, les sciences et la civilisation qu'ils puisent dans la première ville du monde, et à laquelle vous ajoutez le généreux ferment de la piété chrétienné, selon les pures et saintes traditions de notre Église.

Que de titres à la reconnaissance nationale! soyez persuadés, tous les trois, qu'elle ne vous fera point défaut.

Pour moi, quoique bien jeune encore, et sans autre autorité que celle que donnent l'amour et le dévouement, je suis heureux de vous applaudir et de me dire du fond du cœur

Votre respectueux disciple et ami

MEKERDITCH EFENDI B. BEY-DADIAN.

Paris, 1 mars 1858.

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍ ՊԱԼԵԱՆ.

Մարտի 12ին ծաղիկ հասակին մէջ կրոդուր կելլեր աշխարհս Մեծապատիւ Տէր Նիկողոս Պալեան, յետ լցուցանելոյ զայն եւ պայծառացուցանելոյ ազգի ազգի ջքնաղ շինութեամբք եւ առաքինի գործովքն բարութեան:

Այս ազգային անակնկալ ծանր կորստեանը մխիթարութիւն մը որ կայ՝ քէ իւր վսեմափայլ Ազգատոհմին եւ քէ բարեկամացս սրտին՝ այս է, որ բոլոր մեր ազգային եղբարց որ ի Պոլիս եւ ի Փարիզ ցուցուցած անկեղծ ցաւն ու սուգը կվկայեր քէ որչափ սիրելի, ցանկալի ու պատկառելի եղած էր Մեծապատիւ Հանգուցեալը իր աստուածպաշտութեամբն, հաստատուն առաքինութեամբը, ողորմած բարութիւն, լուսաւոր հանճարովն ու ազգասէր յօժարութեամբը: Մեծի ու պզտիկի սերը իրեն գրաւած ատենը՝ վեհափառ Սուլթանին ալ սիրտը իրեն ձգած էր իւր հաւատարիմ եւ հանճարեղ ծառայութիւններովը: Այսպիսի սակաւագիւտ բախտ մը կգործածէր նա ոչ այնչափ յանձին ինչ օգուտ՝ որչափ խեղճ ու աղքատ տնուորաց օգնելու եւ բարերարելու:

Անոր համար է որ ժողովուրդը լացաւ գինքը, ու արտասուօք յուղարկեց գնա ի հայրենիս իւր՝ ի հանգիստ եւ ի փառս յաւիտենական: Ժողովրդեան մը թափած արցունքը՝ անկեղծ է. երանի՛ անոր որ ընդհանուր հեծութեան ու արտասուաց ողբերու մէջ կրոջի ի մշտագուարճ բերկրութիւն եւ ի կեանս յաւիտենից.....

Այս տարաժամ ու սգալի մահուանը վրայ մեր զգացած խորին ցաւը հետեւեալ տխրագիծ տողերովը լուսահոգի Հանգուցելոյն վսեմափայլ Հօրը կյայտնեինք:

ՎԱՍՆԱՓԱՅԼ ԵՒ ԱՋԳԱՍԻՐ ԿԱՐԱՊԵՏ ԱՄԻՐԱՅԻ ՊԱՒԼԵԱՆ ՈՂՋՈՅՆ ՍԻՐՈՅ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ Ի ՔՐԻՍՏՈՍ .

Այն դժնդակ կորուստը զոր այս օրերս Աստուծոյ անքննին նախախնամութիւնը հաճեցաւ Ձեր բարեպաշտօն սրտին կրել տալու, այնչափ առատել վշտաբեր եղաւ մեզ ու այնչափ արտասուալի՝ որչափ անակնկալ եր ու ամենեւին անյուսալի ...

Այո, Մեծապատիւ Ամիրայ, մեր մարդկային մտացը եւ սրտերուն համար անյուսալի իմն եր՝ որ աստուածային բարեգթութիւնը ուզենայ գրկել զՁեզ եւ զմեզ յանկարծ այնպիսի մեկ սըրբասուն ու առաքինակրօն Արղարէ մը՝ որ երկրիս վրայ երկնից գթութեան գործիք մըն եր եղած այնչափ բիւրաւոր աղքատաց համար, ու իւր պարկեշտ, ազգասէր ու վեհանձն սրտովն, մտաւորական ջքնադ ձիրքերով, տուած բազմաղիմի վայելքովը ու ապազայ մեծամեծ բարեաց աներկբայ յոյսերովը՝ առ հասարակ մեծի եւ փոքրու օրինակ բարի եւ յորդոր ի լաւութիւն եւ ի քրիստոնեական եղբայրսիրութիւն : Արդարեւ, ինչպես կարելի եր հաւատալ՝ որ Աստուած չլսե այնչափ բիւրաւոր բերաններէ ելած սրտեռանդն պաղատանքներն եւ օրհնութիւնները այնպիսի անգին կեանք մը բազմամեայ երջանկութեամբ պահպանելու :

Ո՜հ, ընդունայն խորհուրդք մեր եւ յոյս ակնկալութեան : Մեք կաղօթեմք ու կմաղթեմք յոտնկայ եւ հաւատով, բայց երբ կտեսնեմք որ ոչ ըստ մեր փափաքանաց եւ ըղձից տնօրինէ Աստուած, կլքանիմք եւ կուլամք իբր թէ չլսեր մեզի ու մեր աղօթքն ընդունած չըլլար : Եւ այս առաւել այն ատեն՝ երբ առելի յայտնի կերպով Աստուած մեր խնդիրքը կատարած կըլլայ :

Անհաւանիկ այնչափ եռանդուն աղօթքներն ու օրհնութիւնները որ Ձեր ազնուափայլ Որդւոյն կենացը համար կմատուցանէին ազգայինք եւ օտարք առ հասարակ՝ բազմամեայ երջանկութիւն իրեն շնորհելու, լսեց Աստուած եւ կատարեց լիուլի առատութեամբ, մեր աղօթիցը լրմանն հետ՝ Արդարոյն առաքինութիւնները միանգամայն պսակելով : Մեք բազմամեայ կեանս կմաղթեինք, ինքն Տէր գյաւիտենականն եւ զանսպառելին հաճեցաւ իւր սիրելւոյն եւ ընտրելւոյն պարգեւել :

Միխթարուեցէք ուրեմն, ով վսեմափայլ եւ աստուածասէր Ամիրայ, միխթարուեցէք այն կորստեանը վրայ՝ որով Ձեր ամենասիրելի Որդին դեռ աշխարհիս ցաւագին վիշտերը չտեսած իւր յարազուարճ երջանկութիւնը գտաւ : Ի՞նչ է այս աղցաւոր ու ապականացու կեանքը որ այնչափ ցաւ տայ մեզ, մանաւանդ՝ երբ ասկէ եկելովնիս է որ անանց ու մշտազուարճ կեանքը պիտի գտնեմք ու վայելեմք անկասկած եւ անկորուստ :

Եւ ահա այն անպատում ու անխոնջ կեանքն է որ գտաւ ու կվայելէ՝ Ձեր նախանձելի Որդին, որուն ինչպես կեանքը՝ այսպես եւ սիրտն եւ հոգին մատաղ մնաց միշտ ու անշաղախ աշխարհիս սուտ հրապոյրներէն. զարմանալի, սիրելի, ու փափաքելի երկրիս վրայ, եւ իւր վսեմաշուք Ազգատոհմին զարդն ու պարծանք, զարդ եւ անդրանիկ պտուղ՝ նաեւ Աստուծոյ արքայութեան փառացը մէջ. առելի պատուեալ ու առելի սիրելի հոն յանմահ Թագաւորէն՝ քան որչափ սիրոյ եր արժանացեալ հոս երկրաւոր մահկանացու բազաւորին առջեւ:

Երանի՜ Ձեզ, Քրիստոսասէր Ամիրայ, որ Ձեր ամենուն քաջածանօթ աստուածպաշտութեանը այսպիսի արժանաւոր Պայազատ ստացայք : Երանի՜ Ձեզ որ այնչափ խնամք ու հոգն որ ունեցայք՝ հարիւրապատիկ արդ կինձէք երկնից ոսկեթոյս դաշտերուն մէջ : Եւ երանի՜ Ձեզ եւ բիւր երանի որ այն ծնողական որդեսէր աչուրներն որ արդ լի են արտասուօք՝ լի են եւ երկնային հաւատոց մշտապայծառ լուսով, որով ոչ միայն Ձեր սիրելի Որդւոյն յաւիտենական փառքն ու անթառամ պսակը կտեսնեք կմխիթարուիք, հապա նաեւ քէ որչափ մեծ ու աստուածահաճոյ գոհ եր զոր ըրիք արդ ի նմա, եւ քէ որչափ մեծ վարձք ու փոխարէն պատրաստած է Աստուած Ձեր անմոռանք համբերութեանն ու ազնուապաշտօն համակամութեանը :

Զդոյն ահա եւ մեր վշտացեալ սրտերը կմաղթեն Ձեր բարեպաշտութեանը՝ եւ յուսահոգի Արդարոյն առաքինասէր եղբարցն ու համեստակրօն Ամուսնի Տիկնոջը համար, որոց առանձին առանձին մեր մեծարանաց, սիրոյ եւ ցաւակցութեան ողջոյններն ընծայելով, մնամք

Ձեր վսեմափայլ Մեծութեանը երջանկութեանն համար Աղօթարարք

ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԹԷՈԴՈՐԵԱՆ
ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՖԱՅԵԱՆ
ԽՈՐԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՖԱՅԵԱՆ

Ի Փարիզ, ի Հայկազեան Վարժարանի, 9 Ապրիլ, 1858.

Յ. Գ. Ազգային մարժարանիս աշակերտքն ալ իրենց խոնարհ եւ որդիական յարգութիւնը Ձեր Մեծութեանը կմատուցանեն: Ո՜հ, չսէ Աստուած մեր այն անմեղ տղայոց աղօթքը զոր մեր արտասուացը հետ խառնեցին Բարձրելոյն դիմաց Ձեր ազնուափայլ յուսահոգի Որդւոյն եւ բոլոր մեծաշուք ազգատոհմին համար, Հանգուցելոյն սակաւօրեայ՝ բայց բազմարդիւն կեանքը Ձեր անգին կենաց արեւուն վրայ կրկնապատիկ առելցընելու :

ՄԵԾԱՊԱՏԻՒ Ս. ԱՒՈՒԲԵԼ ԷՖԷՆԴԻ ՏԱՏԵԱՆ.

Տատեան ազնուաշուք տոհմին զարդ՝ Մեծապատիւ Սիսակ Առաքել էֆենտին, այն սակաւագիւտ անձանց մէկն է՝ որ իրենց անուամբը, հանճարովը, կրթութեամբն, սրտիւը եւ գործօքը՝ զարդ են միանգամայն եւ պարծանք Ազգիս, քէ ներքնոց եւ քէ օտարաց առջեւ: Իւր հաւատարիմբնութիւնը իրաւանաչ տնտեսութիւնն ու աշխոյժ գործառնութիւնները՝ շուտով Օսմանեան պետութեան վստահութիւնը գրաւեցին : Շատ անգամ պետութեան այլ եւ այլ պաշտօնները իրեն յանձնուեցան, եւ ամեն անգամ գիտցաւ իւր պատիւը ամենայն իրօք պահել եւ յառաջել: Վառօդարանի կարեւոր գործոցն ու պիտոյիցը համար առաքեցաւ ի Փարիզ, ի Լոնտոն եւ ի Պրիւքսէլ, եւ արդ ամենայն ճարտարութեամբ ի գործ դնելով իւր պաշտօնը՝ կըդառնայ անուանի իւր սիրելեացը գիրկը, պատուելի եւ դրուատելի յաւետ ի Պետութենէն՝ որոյ ծառայութիւնը աջողութիւնով հաւատարմութեամբ հանեց դարձեալ ի գլուխ, ըղձալի յիւրոցն՝ որոցմէ տասնհինգ ամսէ ի վեր կպանդխտի. եւ մեզ՝ այնչափ առելի ցաւալի՝ որչափ որ այս տարուան մը միջոցին մէջ ստէպ տեսութեամբք եւ մտերիմ խօսակցութեամբք առիթ ունեցեր եմք ճանչնալու եւ յարգելու Մեծապատիւ Պայազատին ազնուական ու բարեպաշտօն ոգին, ուղիղ եւ անկեղծ սիրտը եւ ճշմարիտ ազգասիրութիւնը: Ամեն կիրակի եւ տօն օրեր՝ վարժարանիս ազգային մատրանը զարդն ու փառքն եր իւր եռանդուն աղօթասիրութեամբը. բարի օրինակ եւ գրգիռ ազգայնոց եւ աշակերտաց վարժարանիս :

Հետեւեալ յանպատրաստից գուրգուրած տաղը փոքր ի շատէ կյայտնէ մեր մտերիմ սերը, եւ իրմէ բաժնուելնուս զգացած անկեղծ ցաւը :

ԱՌ ԱԶՆՈՒԱԶԱՐՄ ԵՒ ՄԵԾԱՊԱՏԻՒ

Ս. ԱՒԱԳԵԼ ԷՖԷՆՏԻ Յ. Պ. ՏԱՏԵԱՆ,

ԱՓ ՅԱՓՈՑ ՎԵՐՋԻՆ ՈՂՋՈՅՆՔ.

Աչ. — ի նաներ այսօր երկինք ծիծաղին՝
Զի՝ մեր ժըպիտս ազդեն ի դէմ ցաւագին.
Ի գոհ բախծիցս ըզմեզ խնդրե ցըրել սիրտ.
Անոյշ սա սիւք է որ հրաւեր քեզ շընչեն
Հայրենեաց մարգին :

Աւանիկ հաշտ բնութիւն առ քեզ նորափայլ,
Անհա աջող հրմայք ի չուդ արձակեալ,
Երբ ով վհեհազն, ի գիրկս օն քոց սիրելեաց.
Նոցին անձուկք ընդ քեզ եւ իդձքն ուղեկցին,
Եւ մեր ոխտք սըրտին :

Ե՛րբ, մի յարտօսր ի մեր հայիս խանդակաթ,
Մեզ բոց ըզցաւս, մի քեզ բաժինք ելցեն յայդ,
Մեզ՝ որ ի քեզն անդ բարեկամ լիասիրտ
Ցարդ ունեաք, նըպաստ յորդոր քաջալեր
Սփոփանս ի վիշտ մեր :

Ո՜հ, արդ ըե խորք ուանբաւ խըտրոցք մեր ընդ մէջ
Հզմիութեան բարձցեն վայելս առ ի մենջ,
Ո՞չ ադէ՝ նդ ծովս մըտերմութեանն եւ կապանք
Զօղ սըրտակապ սահեալ ազդե անարգել
Ելեկտրեայ գերդ բել .

Եւ ձայնըն հեշտ, ձայն սիրախորժ մըտերմի
Թէ յարձագանգս անդ նըւադեալ կորընչի,
Բայց չիցէ ուայլ անյօդաւոր ինչ բարբառ
Զոր չըւիցեմք եւ սիրսիցիմք յուսակից . —
Հզբընդմուն սըրտից :

Այո, յուիցուք մեք ցանգ ըզդոյն ձայն սըրտի,
Ի քոյդ անուն, ի գործս՝ համբաւ յոր ղըրդի .
Եւ մանաւանդ ի յուշ աւուրցն ըղձաւետ
Ցոր մեք ի քեզ խընդացաք, Բաջ. — եւ տրիւուր
Ցուշ մի, յայսր աւուր ....

Ե՛րբ, սակայն երբ, հրեշտականմունդ Առաքեալ.
Երբ եւ ըզմերս ազնըւագոյն մասն առեալ,
Երբ, եւ զանձուկ միանջ տաս գողջոյն Հայրենեաց՝
Ցուշ քեզ զի աստ ի դոյն հայիս անձկայրեաց
Սիրտք քոց մըտերմաց :

ԹՈՐԻՈՒՈՒՆԻՆ.

21 Ապրիլ 1858.

ՏԵՐ Յ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ ԲԺԻՇԿ.

Ամսոյս 7ին տեսանք տխրութեամբ մեր ազնիւ բարեկամ Տէր Յակոբ Արզումանեանին Փարիզին մեկնիլը, որ մայրաքաղաքիս մէջ կենացը տասնըմեկ տարին անցուց օգտակար գործունէութեամբ :

Նուանդուն եւ ձեռներէց բնութեանը հետ ոգեկան ձիրքերով եւս զարդարուած, Տէր Արզումանեան մատաղ հասակին մէջ իսկ հասկըցաւ այն մտաւորական անգգայութենեն դուրս ելլելուն հարկը, յորում կզըտնուին դեռ աւանդ, մեր Արեւելեայց շատերը : Սակայն բարեկեցութեան հրապոյրները չորս կողմն առած՝ ամեն բան գիները անգործ կեանք մը անցընելու եւ ինքզինքը այն ամենայն գուարճութենեց տալու կյորդորէին, յորս ընկղմած են եւ կընկղմին տակաւին ազգերնուս մեծատանց որդոց շատերը : Բայց անգործ կեանքը ծանր էր իրեն. անօգուտ կերպով իւր օրերն անցընելուն վրայ կամաչէր կարմրէր. ուստի եւ իւր ընտանեացը սիրոյն ու գորովոյ՝ ուսման եւ կրթութեան սիրովը յաղթելով՝ 1847ին Կոստանդնուպոլսեն ելաւ Գաղղիա եկաւ՝ քաղցրմեկ տարուան :

Հոս բոլորովին ինքզինքը ուսման տուաւ . եւ եռեւեռ եռեւ տերութեան առջեւ երկու քննութիւն անցուց, *Պահպօրեա ես սիանս* եւ *ես ղեթր* ըսուած ուսումնական բարձր աստիճաններուն վկայագիրներն առնաւ, եւ ազգայնոց մէջ ինքն առաջիններէն մէկն եղաւ որ այս վկայագրոց երկուքին եւս միանգամայն արժանանայ :

Այնուհետեւ սրտի մտօք իւր սիրելի բժշկութեան ար-

M. LE DOCTEUR ARZOUMAN.

Le 7 de ce mois nous avons eu à regretter le départ de Paris de notre bon ami M. Arzouman, qui avait passé dans cette capitale onze années employées avec activité et profit.

D'une nature vive et entreprenante, doué de rares facultés, il avait de bonne heure senti le besoin de sortir de cette apathie intellectuelle, malheureusement trop commune encore aujourd'hui en Orient. Environné des séductions du bien-être, tout le portait à accepter les charmes de l'oisiveté et à se jeter dans cette vie de plaisirs si chère à la plupart des jeunes gens des familles opulentes de notre nation. Mais l'inaction aurait été sa mort; et il eut rougi de traîner une existence inutile. Aussi l'amour des sciences et le désir de s'instruire l'emportant sur la tendre affection qu'il avait pour les siens, en 1847, à l'âge de vingt-et-un ans, il quitta Constantinople, sa patrie, pour se rendre en France.

A peine à Paris, il s'adonna tout entier à l'étude et se prépara à passer successivement deux examens devant les Facultés des Lettres et des Sciences; il obtint les deux diplômes de bachelier ès-lettres et de bachelier ès-sciences, grades que, l'un des premiers de nos compatriotes, il a réunis.

Il entreprit alors des études spéciales et se livra corps

ւեսիլ ետեւե եղաւ, եւ թեպետ երկու անգամ քաշած ծանր հիւանդութեանցը պատճառաւ հարկ եղաւ որ ուսմունքը առ ժամանակ մի ընդհատե ու հայրենեաց օդը ծծելու երթայ . բայց վերջապես իւր անդուլ ջանքն ու աշխատանքը յաջողութեամբ պսակեցան ,եւ մարտի 21ին Փարիզու բժշկութեան Դպրոցին մէջ, առաջի բազմաթիւ ժողովականաց՝ — որոց մէջ կտեսնեին ընդ ուրախութեամբ գրեթէ բոլոր փարիզաբնակ ուսումնասէր հայ երիտասարդները որ իրենց համազգի ընկերակցին ֆաջուրիւնը տեսնելու եւ ուրախանալու էին վազեր, —Տ. Արզումանեան ներկայացուց իր քննութիւն ամենօգտակար ու դեռ քիչ ճանչցուած նիւթի մը վրայ յօրինած բժշկական ճառը, որ էր *իւրային անատոմիական ժամանակ մատնելոյն ջիղերուն վրայ տեսնուած այլայլութիւնները:*

Նիւթոյն վրայ ունեցած հմուտ գիտութեամբը մայրաքաղաքիս ամենեն երեւելի բժշկաց զովեստիցը արժանի եղաւ: Այն մեծանուն Պուլլիօ, Նելաթոն, Փիօռի եւ Վելփօ բժշկաց ի նշան մեծարանաց եւ երախտագիտութեան իւրոյ նուիրած է Տ. Արզումանեան իր ճառը , որոնք ուսմանցը բոլոր ընթացքին մէջ իր ընտիր կատարելութիւնները դիտելով՝ զինքն իրենց բարեկամութեամբը պատուեր հին միշտ:

Արդէն շատ պարագաներու մէջ ցուցուց նոս Տ. Արզումանեան իւր բժշկական հարտարութիւնը: Մեք եւս շատ անգամ թէ մեզ անձին եւ թէ Հայկազեան վարժարանիս աշակերտացը վրայ փորձեցինք անոր տուած պատուական խրատուց ու դեղոց օգտակարութիւնը: Դեռ ասկէ երկու ամիս յառաջ մեր աշակերտաց մէկը բմբատեճդէ (*բիֆթեք*) բռնուած՝ մեր սիրտը անու դողի մէջ ձգած էր. Տ. Արզումանեանին միջնորդութեամբը Տ. Պուլլիօ Փարիզու առաջին բժշկաց եւ փորձառուաց մէկը, որ եւ մասնաւոր սիրով մը զինքը կսիրէ , հաճեցաւ երբեմն գալ մեր հիւանդին պատանեակը տեսնել. բայց իւր աշակերտին խոհեմութեանն ու գիտութեանը վրայ մեծ վստահութիւն ունենալով՝ բոլորովին իրեն յանձնեց մեր հիւանդին ընելիք հոգն ու խնամքը, եւ ուրախութեամբ կիրատարակեմք որ հիւանդը շուտով վտանգն անցուց եւ սկսաւ առողջանալ, եւ այսօրուան օրս բոլորովին ապաքինած՝ մեզի հետ կմիանայ իւր առողջարարին հանճարը գովելու եւ երախտագիտութիւնն անոր յայտնելու :

Թեպետեւ մեկ կողմանե մեր Տ. Արզումանեան բարեկամին մեկնիլը մեզ ցաւ պատճառեց, միւս կողմանե եւս ուրախանամք մտածելով որ իւր քաշափորձ հմտութիւնը յայն ասպարիզ պիտի գտնե Կոստանդնուպոլսոյ մէջ, ուր սակաւ են հարտար բժիշկք :

Եւս առաւել՝ որ այսուհետեւ ազգայինք պիտի

et âme à la médecine; et quoique, à la suite de deux graves maladies il ait été obligé de suspendre un moment ses travaux et d'aller respirer l'air natal sa persévérance vient néanmoins d'être couronnée de succès. Le 21 mars 1858 il a soutenu devant la Faculté de médecine sa thèse doctorale sur une question d'un grand intérêt et bien peu connue jusqu'à ce jour : *Sur les troubles nerveux de la locomotion observés dans la chloro-anémie.* Parmi l'auditoire, nous remarquions avec joie presque tous les étudiants arméniens de Paris, accourus pour applaudir au triomphe de leur camarade. Une connaissance approfondie de son sujet lui a mérité les éloges des professeurs les plus distingués de la capitale.

C'est à ses illustres maîtres qui, appréciaient M. Arzouman à sa juste valeur, et qui pendant tout le cours de ses études l'ont toujours honoré de la plus vive amitié, c'est à MM. Bouillaud, Nélaton, Piorry et Velpeau qu'il a dédié sa thèse, comme un hommage de reconnaissance.

En bien des circonstances déjà M. Arzouman a fait preuve d'un remarquable talent comme médecin. Nous aussi, nous avons pu en juger par nous-même, nous à qui, en plusieurs circonstances, il a donné d'excellents conseils et par quelques-uns de nos élèves du Collége national arménien qu'il a bien voulu traiter. L'un d'eux, atteint récemment d'une fièvre typhoïde, inspirait les craintes les plus sérieuses. Grâce à l'intervention de M. Arzouman, M. Bouillaud, un des premiers professeurs et des premiers praticiens de Paris, qui entre tous lui témoigne une affection particulière, a bien voulu voir quelquefois ce jeune homme. Mais confiant dans la prudence et le tact exquis de son élève, il lui a laissé presque entièrement la direction des soins à donner au malade, et nous sommes heureux d'annoncer qu'aussitôt il est entré en convalescence. Aujourd'hui, entièrement rétabli, il se joint à nous pour rendre hommage au talent de celui auquel il doit sa guérison et lui témoigner toute sa gratitude.

Malgré la peine que nous a causée son départ, nous ne saurions trop féliciter M. Arzouman d'être rentré à Constantinople. C'est là surtout où les bons médecins sont si rares que ses connaissances approfondies trouveront un vaste champ pour s'exercer.

Désormais nos nationaux pourront jouir des fruits de

կարեցան վայելել ի նմա տասը տարուան ուսմանց պտուղը, ու պիտի ճանչնան ու յարգեն ըստ արժանւոյն իւր հայրենասիրութիւնը՝ որով ընտրեց ու առաւ դժուարին՝ բայց եւ օգտակար վիճակ մը հայրենակցաց ծառայելու, ու հայրենեաց պիտանի անդամ մը ըլլալու :

ses dix années d'études, ils reconnaîtront et estimeront le patriotisme qui l'a porté à embrasser une profession difficile il est vrai, mais qui lui permet de rendre des services à ses compatriotes et d'être un membre utile à notre commune patrie.

Տ. ՄՍԵՐ ՄՍԵՐԵԱՆՑ. — Արժանապատիւ եւ գիտնական պարոն Մսեր Մսերեանց Զմիւռնացի, որ Մոսկուայի Լազարեանց ճեմարանին մէջ հայկաբանութեան եւ կրօնական ուսմանց դասատու է, փետրուարի 8ին Ռուսաց օգոստափառ Կայսրէն վարձատրուեր է ասպետական նշանաւ սրբոյն Սբանիսլասայ կարգին երկրորդ աստիճանի ի փոխարէն Վարժապետական իւր ժրաջան ծառայութեանցը : (ԱՐՇԱԼՈՒՅՍ.)

ՎԱՐԴԱՆ ՓԱՇԱ. — ԵԱԻԼԷՐ ՓԱՇԱ. — ԱՌԱՔԵԼ ՓԱՇԱ :— Պօյսոյ րդթակիցներնիս մեծ ուրախութեամբ լսեցինք որ Օսմանեան պետութիւնը բարեհաճեր է *Փաշայութեան* փառաւոր պատուանունը շնորհել վեհափայլ Յովսեփ Վարդանեան ու Թնկրեան Անտոն Եաւեր Պէյերուն, որ արդ Վարդան Փաշա եւ Եաւեր Փաշա իշխանական անուններուն արժանացան :

Արդէն ուրիշ անգամ Օրագրիս մէջ տեղեկացինք ուրախութեամբ՝ ազգայնոց մէջէն անդրանիկ Փաշա Նուսպարեան Առաքել Պէյին փառաւորուիլը ոչ միայն փաշայութեամբ, հապա նաեւ Սուլտան աշխարհին կուսակալութիւնն ալ մեծապանծ վիճակ եւ իմաստութեամբ ընդունիլն ու ցարդ կառավարելը :

ԿԵՆՑԱՂՕԳՈՒՏ ԲԱՆԲ

ՊԱՐՏՔ ԱՌ ՀԱՅՐԵՆԻՍ.

Ա.

Ծնողքնիս, զաւակնիս, ազգականնիս ու բարեկամնիս կսիրեմք. բոլոր մեր այս սիրելիքը հայրենիք տուեր է մեզ, եւ իւր ծոցը կընակեցընէ զանոնք. ուրեմն հրջափ պէտք է սիրեմք այս Հայրենիք ըսուած օրհնեալ երկիրն ու իրեն համար ամէն գոհ աչքերնուս բերեւ ու փոքր երեւայ :

***

Ո՞րպէս կարող եմք չնուիրել հայրենեաց բոլոր մեր ստացուածքը, երբ մտածեմք որ ամէն ունեցածնիս իրմէ առած եմք :

ԿԻԿԵՐՈՆ.

Միտդ բեր միշտ որ հայրենիք անտնօրինելի եւ սրբազան իրաւունք ունի հանճարոյդ, առաքինութեանդ, զգացմանցդ եւ բոլոր գործոցդ. ինչ վիճակի մէջ ալ որ գտնուիս, պահապան գինուոր մի ես հայրենեաց, եւ պարտդ է միշտ անոր վրայ հսկել, եւ որ եւ իցէ վտանգի ժամանակ անոր օգնութեան վազել :

ՊԱՐԹԵԼԸՄԻ.

Հայրենեաց համար մեռնիլը քաղցր ու փառաւոր բախտ է :

ՀՐԱՏԻՈՍ.

Որ տապակուսի մեռանել վասն հայրենեաց՝ այր վատանուն է միշտ :

ՍԱՐԴԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ.

Հայրենեաց ծառայելու ժամանակ պէտք է որ բոլոր մեր անձնական ըղնամութիւնները՝ կրքերն ու վրէժխնդրութիւնները դադրին, առանձնական սէրն ու զորովը լռեն. մարդս պիտի ոչնչանայ, եւ քաղաքացին միայն պիտի մնայ բոլորանուէր հայրենեաց :

***

Քաղաքական կիրք յայնժամ եւեթ օրինաւորք են, յորժամ հայրենասիրութիւնն վառարան է նոցին. բայց բազում անգամ ի վէճս կուսակցութեան դուն ուրեք զօգուտ աշխարհին խորհիլ մաղղիկ :

Ս. Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ.

Հայրենեաց դէմ բարկանալը մեծ յանցանք է :

ԿԻԿԵՐՈՆ.

Ամէն անգամ որ մէկը հայրենեացը դէմ կելատերագմի՝ բնութեան դէմ կգործէ :

ՖԵՆԵԼՈՆ.

Հայրենեաց օգտին համար չկայ անձնական շահ մը որ առաքինի քաղաքացին չկարենայ գոհել :

***

Որպէս զի հայրենիք երջանիկ ըլլայ, պէտք է որ իշխանք եւ դատաւորք օրինաց հնազանդին, քաղաքացիք եւս իշխանաց եւ դատաւորաց :

ՍՈՂՈՆ.

Պատմեցէք մանկանցդ գեղեցիկ փառս եւ գաժմեան հանգամանս հայրենեաց ձերոց, զի մատաղ սիրտ նոցա զուարճացեալ եւ զգածեալ միանգամայն գեղեցիկ եւ տիւր յիշատակօք գիտասցեն թէ զինչ ունին առնել նմա ի պարտուց իւրեանց եւ յիրաւանց ժառանգութեան :

Ս. Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ.

Մի հարցըներ թէ ինչ է քու պարտդ առ Հայրենիս : Սիրէ ու կսովրիս :

***

Իշխան ես. հայրենեացդ իշխել գիտցիր. գինուոր, հայրենեացդ համար մեռնիլ աչքդ առ. քաղաքացի, հայրենեացդ ծառայել մտածէ. արուեստաւոր, հայրենեացդ հարստութիւնդ բա-

նեցուր. գիտուն, հայրենեացդ օգուտը մտածէ ու սովրեցուր. տգէտ, գէթ հայրենիքդ սովրէ ու պահէ:

***

Պատերազմը չկրնար փառք բերել զօրավարին՝ երբ յաղթութիւնը՝ հայրենեացը օգտին համար չէ: Միայն հայրենեաց պարտքն է որ կրնայ արդարացուցանել արեանց հոսմունքը:

***

Փառք մը՝ զոր հայրենեացդ վնասովը կփնտռես՝ ոչ միայն անցաւոր է եւ կորստական, հապա նաեւ անոր հետ կկորսուիս դուն ալ. եւ ուրիշ բանի համար չես յիշուիր, բայց գի հայրենեացդ վնասել աշխատեցար: Օրինակ քեզ ըլլան եւ խրատ գգուշութեան բոլոր հայրենատեաց եւ ազգատեաց մարդոց գարշելի ու նզովելի յիշատակը:

***

Առ հայրենիս պարտքը ոսկի շղթայ մի է, զոր անձնուրաց եւ վսեմախոհ քաղաքացիք միայն կրնան իրենց վիզը անցած տեսնել, եւ իրենք միայն արժանի են. վասն զի այն գերապանծ շղթային ամեն մէկ օղակը օր մը անթառամ փառաց մէյմէկ պսակները պիտի ըլլան:

***

Օրինակ ճշմարիտ քաղաքացւոյ

ՈՒՇԻՆԿԹՐՆ.

Այլ եւ այլ ձիւն եւ նոր մեծանուն մատենագրաց մարդուս առ իւր հայրենիս ունեցած սրբազան պարտուցը վրայ տուած գեղեցիկ պատուէրներ մեր ազգասէր ընթերցողաց յիշեցընելն չետոյ, այլ եւ այլ պարզ օրինակներով ու պատմութիւններով ցուցընեմք նաեւ թէ առաքինի մարդիկ ինչպես հասկըցեր են այն պարտքն ու ինչ կերպերով ի գործ դրեր են:

Քաղաքական պարտուց անթերի կատարմանը համար Գեորգ Ուշինկթընեն առնելի գեղեցիկ օրինակ չեմք կրնար բերել, որ Ամերիկացւոց ազատութեանը հիմնադիրն եղաւ, եւ իրաւ այր սոսկական, պատերազմող եւ պաշտօնեայ պետութեան՝ միշտ անթերի կերպով քաղաքացւոյ ամեն առաքինութիւնները իւր վրայ փայլեցուց:

Ուշինկթընին ծնած ժամանակը (1832) Միացեալ-Նահանգաց հասարակապետութիւնը չկար, եւ երկրին մէջ տասներ գաղթականներ կային՝ Անգղիոյ հպատակ: Ասոնք Անգղիոյտերութեան բռնութեանցը դէմ չկարենալով համբերել՝ 1774ին ապստամբութեան դրօշակը կանգնեցին, եւ մտքերնին դրին որ անկախութիւննին ձեռք բերեն: Իրենց գլուխ մը պէտք էր. Ուշինկթընը ընտրեցին եւ իրեն սպարապետութեան պատիւն ու իշխանութիւնը տուին:

Այն ժամանակ քառասունհնգերկու տարեկան էր Ուշինկթընը: Երիտասարդութեանը ատեն իւր գառնին զինուորացը գլուխ կեցած՝ վայրենեաց դէմ ըրած պատերազմին մէջ քաջացեր էր. բայց չետոյ ինքզինքը բոլորովին իւր արտերը մշակելու եր տուեր: Սրտին մէջ ամենեւին փառասիրութիւն չունենալով՝ իրեն տրուած պատուոյն բնաւ չէր սպասեր. մանաւանդ ալ որ ժրջալի արիասիրտ ու մեծասիրտ էր, այնչափ ալ խաղաղասէր եւ համեստ: Բայց երբոր առիթն եկաւ, երբոր հայրենիք իւր հանճարոյն ու ծառայութեանը կարօտ եղաւ, իմաստուն երկրագործը ինքզինքը մեծանուն պաշտօնեայ պետութեան եւ քաջամարտիկ պատերազմող ցուցուց:

Անգղիացւոց դէմ եղած կռիւը ինն տարի տեւեց, եւ հարկ եղաւ որ Ուշինկթընն անուր դժուարութեանց յաղթէ: Խոչընդոտք, ձախորդութիւնք, բընամութիւնք, մատնութիւնք եւ անիրաւութիւնք չորս կողմը կըվխտային. արիութեամբ ու վշտակիր համբերութեամբ



Ուշինկթընն. — Washington.

ամենուն ալ յաղթանակեց: Իւր զօրքը որ միշտ Անգղիացւոցմէ սակաւաթիւ էր, անդադար ալ դասալիքներուն պատճառաւ առնելի կտկարանար, ոչ հագուստ ունէր, ոչ կերակուր, ոչ զինուորական կրթութիւն եւ ոչ իսկ քաջութիւն: Բայց Ուշինկթընի անարատ հանճարը շուտով անոնց ամեն բան ճարեց, կրթեց, կարգաւորեց զիրենք, իւր քաջութիւնը անոնց սրտին մէջ վառեց բորբոքեց, եւ անոնց սէրն ու մեծարանքը իւր վրայ դարմանց:

Ուշինկթընին զինուորական հանճարեն առնելի գարմանալի էր անյաղթելի հաստատութիւնը, եւ շատ հռչակաւոր է 1777 եւ 1778ին ձմեռը այս հաստատամտութեան տուած օրինակը: Անապատի մը մէջ Փիլադելփիոյ մօտ Ուոլլի-Ֆորճ ըսուած տեղը բանակեր էր, եւ չորս դին ձիւն եւ սառնամանիք պատած էին: Այն սոսկալի տեղը նորածին հասարակապետութեան պաշտպաններուն քաշածն անկարելի է նկարագրել. առանց հագուստի, առանց ոտքի ամանի, առանց գինքի, առանց հացի, շատերն անօրութենէ,

ցրտե ու խեղճութենե մեռաւ. դասալիքներուն թիւը բազմացաւ, եւ սպաներն ալ անգամ սկսան թշնամեաց կողմն անցնիլ. եւ թեպետ խիստ քիչ ինդի մնացին Ռուշինկրըցին քով, սակայն եւ այնպես անյողդողդ քաջութեամբ կդիմաներ նա : Ամեն բան կարծես թէ գինքը ոգեսպառ յուսահատցնելու համար միաբաներ էր : Երկրին մէջ ամեն տեղ իրեն դէմ կգանգատին. դատաճանութիւններն ու զրպարտութիւնները կշատնային եւ ժողովուրդը կսկսեր սպարապետին բռնած ճամբան պարսաւել, անխելք անկարող գինքն անուանել եւ տեղը ուրիշ մը փնտռել : Այս ամեն բան կտեսնէ կլսէ մեր դիւցազնը, քաղաքացին եւ իմաստունը, եւ անխոռով անայլայլակ կմնայ, եւ այս սոսկալի փոթորկին դէմ իր հայրենասիրութիւնը, առաքինութիւնը, ներողամտութիւնը, մտաց հաստատութիւնն եւ ուղղութիւնը կդնէ. եւ թեպետ հայրենակցացը ապերախտութեանը վրայ կտագնապի, բայց չսրդողիր նախ անմեղ հայրենեաց, եւ անոր կարօտութիւնը չտեսնելու համար վրայէն երեսը չդարձներ, ինչպես շատերուն սովորութիւն է մեր ազգին մէջ ... Բարեբախտաբար իրաւունքն ու արդարութիւնը շուտով իրենց տեղը կգտնեն. Ռուշինկրըցի դէմ եղած յարձակմունքները կդադրին եւ ճարտար նաւապետին ձեռքը կրողուն բազմավտանգ նաւուն դեկը, զոր գիտցաւ փառօք եւ պատուով ի նաւահանգիստ փրկութեան հասցընել : Իրեն օգնութեան հասած գաղղիացի զօրաց եւ անոնց Լաֆայէթ զօրավարին ձեռնտուութեամբը՝ վերջապես Անգղիացիքը երկրէն հալածեց, եւ Անգղիայեն իր սիրելի հայրենեաց փափագելի անկախութիւնն առաւ:

Այսպես բազում նեղութեամբ եւ հալածանօք հայրենիքը օտար իշխանութենէն ազատելէն յետոյ՝ զօրքը արձակեց Ռուշինկրըն, սպարապետութեան իշխանութենէն հրաժարեցաւ, զնաց իբրեւ հասարակ քաղաքացի մը իր կալուածները քաշուեցաւ, եւ նոն հասած օրն այսպես կգրէր իր բարեկամաց մէկուն. « Տանս դռները տեսան գիս իմն ամօք առելի ծերացած : Կլյուսամ կենացս մնացած օրերն անցընել բարի մարդոց սերը վայելելով եւ տնական առաքինութիւններ կատարելով : Երկրագործի մը կեանքը ամենեն առելի հեշտալի է. վասն զի պատուաւոր է, գուարճալի եւ միանգամայն շահաբեր : Առանձնական կեանք անցընելուս վրայ ունեցած ուրախութիւնս չեմ կարող յայտնել քեզ : Բնաւ մէկուն վրայ չնախանձելով, միտս դրած եմ ամեն բանով գոհ ըլլալ, եւ ասանկով կամաց կամաց կենաց գետնէն վար պիտի իջնամ մինչեւ ննջեցից ընդ հարս իմ ի խաղաղութիւն: »

Իր այս փափաքը չկրցաւ կատարել. վասն զի ինգամեայ խռովութիւններէ ու մրրկայից վէճերէ ետքը Միացեալ-Նահանգաց սահմանադրութիւնը հրատարակեցաւ, եւ միաձայն հաւանութեամբ Ռուշինկրըն նախագահ հասարակապետութեան անուանեցաւ :

Մարդ մը չէ եղած որ առելի արդար ճանապարհաւ, ասկէ առելի հասարակաց միակամ բաղձանքովն ու եռանդեամբը ի կատար իշխանութեան հասած ըլլայ : Սակայն այս առաջարկութիւնը ընդունելու համար հարկ եղաւ որ ընդ երկար տատանի: Ինգամեայ տաժանելի աշխատանքէ ետքը զտած քաղցր հանգստութենեն հրաժարիլ, բարձր ու դժուարին պաշտօն յանձն առնուլ եւ միանգամայն փառասիրութեան կասկած տալ շատերուն, իրեն համար անտանելի բան էր : Հայրենեաց սերը իր մեծ դժկամակութեանը յաղթեց եւ ընդունեցաւ այն բազմավիշտ առաջարկութիւնը :

Ծափաձայն եւ ցնծալից աղաղակաւ բազմութեան ժողովրդոց՝ գեղեցկազարդ հանակով մը մտաւ ի Նիւ-Եօրք, որ հասարակապետութեան առաջամանակեայ մայրաքաղաքն էր : Բոլոր այս փառքն ու պատիւը տեսնելով փոխանակ ինքզինքը ուրախութեամբ մոռնալու, այսպես կգրէր նա իր օրագրութեանը մէջ. « Նահանգ շարժումը, հաներու գոյնզգոյն դրօշակներով զարդարուիլը, երաժշտաց քաղցրաձայն երգերն ու հուռռոցները, հրետից սաստկաշառաչ բնդմունքը, եւ գետափունքեն անցած ժամանակս յոգնախռով ժողովրդեան միջեւ երկինքը բարձրացուցած ուրախութեան աղաղակներն սիրտս տխուր ու քաղցր զգացմամբ լեցուցին. վասն զի կմտածեի որ գուցէ օր պիտի գայ որ բոլորովին ասոր ներհակ տեսարաններ պիտի տեսնեմ՝ բարին գործելու համար ձեռքս եկած ամեն ջանքն ու աշխատանքն ընեչեն վերջն ալ : » Ցաւալի ճշմարտութիւն...

Մեծաւ հարտարութեամբ ու անյողդողդ արիութեամբ կառավարեց Ռուշինկրըն, եւ միշտ հաւատարիմ գործադիր եղաւ բարեկարգութեան, ազատութեան եւ արդարութեան. բոլոր երկրին մէջ իր անշահասիրութիւնը առակ դարձած էր, եւ անով ալ էր որ շատ դժուարութիւններ առջեւը կդիւրանային. վասն զի ամենքը համոզուած էին թէ ինչ որ կընէ, ինչ որ կմտածէ ու ինչ որ կառաջարկէ՝ հասարակաց հայրենեաց օգտին ու պայծառութեանը համար էր. ուստի եւ ամեն բարեսէր մարդիկ ձեռնտու օգնական էին իրեն :

Իր պաշտօնը ամենուն ակնկալութենեն վեր կերպով ալ կատարեց Ռուշինկրըն ամենայն յաջողութեամբ ու փառօք : Շուտով հայրենեաց վերքերը գոցուեցան. ամենուն սիրտը ապահովցաւ, գործերը կարգաւորեցան, երկրագործութիւնն ու վաճառականութիւնը ծաղկեցան, եւ Միացեալ-Նահանգը այն յառաջադիմութեան ու բարգաւաճութեան ճամբան մտաւ, որուն

վրայ հիմա կզարմանան տիեզերք : Բայց տարիներն սրացան անցան եւ նախագահութեան համար սահմանուած ժամանակը լմընցնալու մօտեցաւ.. հասկըցաւ ամենքը որ Ռուշինկրըճի արժանաւոր յաջորդ գրեթէ անկարելի պիտի ըլլայ գտնել. անոր համար եւ միաբերան աղաչեցին զինքը որ այս ծանր բեռը ի սէր հայրենեաց անգամ մըն ալ վրան առնուն :

Երկար ժամանակ տարակուսեցաւ մնաց Ռուշինկրըճն եւ չէր գիտեր ընելիքը՝. առ Աստուած դիմեց որ իւր միակ ապաւէնն էր ի դժուարինս, որպէս զի յոյս տայ իրեն. եւ իւր բարեկամին գրեց. « Տէրն բոլորից եւ ամենագետն Աստուած միջնէն ցայսօր հսկեց վրաս. վստահ եմ որ ընելու առաջադրութեանս ատեն այնպէս պիտի յուսաւորէ միտքս, որ բանած ճամբուս մէջ անկարելի պիտի ըլլայ ինձ մոլորիլ » :

Լիուլի քուէից վերստին ընտրուելով՝ ճոյնպիսի անշահասիրութեամբ ու քաջութեամբ շալկեց Ռուշինկրըճն իւր ծանրակիր բեռը :

Այս երկրորդ նախագահութեան ժամանակ մեծամեծ դիմադրութիւններ պիտի կրեր : Անյողդողդ արիութեամբ մեկ կողմեն տերութեան իշխանութիւնը գիտցաւ պատկառելի ընել, եւ միւս կողմեն օտար ազգաց հետ խաղաղութիւն պահել, բեպետեւ հզօր ու բազմաթիւ կուսակցութիւն մը ամեն ճիզը կթափէր զինքը գլխիվայր բերելու: Վերջապէս նախագահութեանըվերջերը դիմադրութիւնը դադրեցաւ, ամենայն սիրտք առ հասարակ իրեն դարձան, եւ աղաչեցին որ երրորդ անգամ ալ տերութեան կառավարութիւնը յանձն առնուն :

Բայց միտքը որոշեր էր. բացի ի բաց մերժեց. եւ քաշուելեն յառաջ վերջին հրաժարական ողջոյնը տուաւ ազգին՝ որուն ազատութեանն ու պայծառութեանը համար արիւն քրտինք թափեր էր, եւ այնչափ տարի իմաստութեամբ եւ անձնանուէր ծառայութեամբ կառավարեր էր : Այս հրաժարականին մէջ ծայրէ ծայր իմաստուն խրատներ եւ վեհ մտածմունքներ լեցուն են : « Տեսչութեանս գործերը աչքէ անցընելով՝ բեպետեւ բնաւ գիտութեամբ եղած սխալմունք մը չեմ գտներ, սակայն այնչափ քաջ կճանաչեմ պակասութիւններս, որ անկարելի է ինձ չմտածել թէ անշուշտ շատ ակամայ եւ անգիտութեամբ բերութիւններ ալ ըրած եմ. ուստի եռանդագին սրտիս պաղատիմ առ Բարձրեալն որ անոնցմէ գալու չարիքը հայրենեացս վրայէն հեռացունէ : Մեծ յոյս ունիմ որ հայրենիքս քառասուն եւ հինգ տարուան անձնանուէր ծառայութիւնս յիշելով՝ ներողամիտ կըլլայ իմ այն անձնական պակասութեանցս ու կմոռնայ զանոնք, ինչպէս որ ես ալ քիչ ժամանակէն պիտի մոռնամ ի կայանս հանգըստեան : »

Դեռ երկու տարի ապրեցաւ Ռուշինկրըճն եւ բոլոր ժամանակը անխոնջ աշխատասիրութեամբ երկիր մշակելով եւ ուսման պարապելով կանցընէր, չէր դադրեր նաեւ բոլոր իւր բարութեանը դիմողներուն ամեն կերպ օգնութիւն ընելեն : Այն երկու տարուան մէջ ոչ որ բերնեն խօսք մը լսեց զինուորական քաջագործութեանցը եւ կամ ուրամեայ փառաւոր ու արդիւնաւոր նախագահութեանը վրայ : Կարծես թէ ինքը այն մեծ ու բազմարդիւն մարդը չէր : Արժանապէս եւ երբոր մեռաւ, (1799) Միացեալ-Նահանգաց ժողովուրդը երեսուն օր սուգ բռնեց :

(Շարունակութիւնն ուրիշ անգամ.)

ՀԱՅԵՐԷՆ-ԳԱԼԼԻԱԿԱՆ ԲԱՌԳԻՐՔ

ԳՕՐԾԵԱՑ

ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ԳԱԼՖԱՅԵԱՆ

Ազգի մը առաջին գիրքը՝ Բառգիրքն է, ըսած են իմաստունքն առ ի ցուցանել թէ ինչ կարեւոր գործիք է ասիկա ազգի մը կրթութեանն ու յառաջադիմութեանը համար : — Այս գիրքը այնչափ աւելի հարկաւոր կըլլայ եւ պիտանի՝ որչափ որ հարկաւոր է այն լեզուն՝ զոր բառգիրքը կանդամագնէ, ու մի առ մի անոր ճոխութիւնները, փափկութիւնները, առմունքները, կերպերը ընթերցողին երեւան կհանէ :

Արդ այս անհրաժեշտ լեզուն, անընդհատ կիրառութեամբ՝ մայրենի լեզուն է: Անկէց վերջը՝ ազգի մը համար այն լեզուն է հարկաւոր որուն գործածութիւնը ազգին մտաւոր եւ կամ նիւթական առաջին կարգի պիտոյիցը համար ամենահարկաւոր է :

Հիմակուան ժամանակս թէ որ կայ լեզու մը՝ որուն պէտքը ամեն ազգ իրենց սեպհական լեզուեն վերջը ճանչցած ըլլան ու բանիւք եւ արդեամբք խոստովանած՝ տարակոյս չկայ որ *Գաղղիարէնն* է : Աւելորդ է խօսքերնուս վկայութիւն փընտռել. Եւրոպայի մէջ ազգ մը չեմք գտներ՝ որ իւր լեզուին

DICTIONNAIRE ARMÉNIEN-FRANÇAIS

PAR

M. AMBROISE V. GALFA

Si les savants ont dit : « Le premier livre d'une nation est son Dictionnaire, » c'est pour prouver combien cet instrument est nécessaire à l'instruction et au progrès des peuples. — Plus une langue est indispensable et utile, et plus aussi est indispensable et utile ce livre qui anatomise un à un et met à découvert aux yeux du lecteur les richesses, les délicatesses et les idiotismes de cette langue.

Or cette langue indispensable, d'un usage continuel, est la langue maternelle. Après celle-ci, telle autre est nécessaire à une nation lorsque l'usage en est rendu obligatoire par des besoins intellectuels ou matériels de premier ordre.

S'il en est aujourd'hui une, après la langue maternelle qui soit reconnue comme éminemment utile par chaque nation et proclamée en paroles et en action, c'est sans contredit le *français*. Il serait superflu d'en citer des preuves. Il n'est pas en Europe une nation qui, outre un dictionnaire en son propre idiome, n'en possède

բառգիրքն ունենայ՝ եւ իւր լեզուին ի Գաղղիարէն բառգիրքն ալ չունենայ. ինչպէս նաեւ վարժարան մ՚ալ չկայ ուր Գաղղիական լեզուն առանձին փութով ըսովրեցուի :

Ուստի զարմանք չէ որ մեր ազգն ալ մասնաւոր սէր մ՚ունեցած ըլլայ եւ ցուցընէ Գաղղիարէնի վրայ : Իւր բազմակատար պիտոյիցը ասիկա անհրաժեշտ հետեւանքն է. հետեւանք միանգամայն այս համաշխարհիկ լեզուին մատենագրական առատ ճոխութեանը, որ ամէն ազգի ալ ճարակ է, բոլ մեզի պէս սովալլուկ ազգի մը : Բայց այս լեզուն սովրելու դեռ գլխաւոր միջոց մը կ՚ակնկալի՝ որ է *Բառգիրքը* : Աւզերեանին բառգիրքը՝ թէ եւ գովելի իւր ժամանակին նայելով, բայց շատոնց ճանչցած են ազգային եւ օտար ուսումնականք՝ թէ իւր բազմատեսակ թերութեամբը ու խուռն սխալներովը՝ ոչ միայն մեր ժամանակին չկրնար ծառայել՝ այլ նաեւ շատ վնաս ալ ընել երկու լեզուն եւս ուսանողաց : Ուստի եւ իրաւամբ շատոնց է որ ազգայինք եւ հայասէր օտարք *Հայերէն-Գաղղիարէն* բառգիրք մը կ՚ինտրեն :

Չորս տարուընէ ի վեր այս նոր գործոյն ձեռք գարկած՝ մտադիր աշխատեցանք ազգիս միանգամայն եւ հայասիրաց այս եակաւ պիտոյքը լցուցանելու: Հասանք արդեօք մեր վախճանին. — Յուսամք, երբ գործոյն վերջը նայելու ըլլամք, ու ամենեւին աշխատութեան ու տքնութեանց չենայելնուս : Բայց սակայն չեմք կրնար ուրախանալ եւ միխիթարուիլ մեր այս դժնդակ աշխատութեանը վրայ՝ մինչեւ որ հասարակաց պիտոյիցը օգտակար չտեսնեմք գայն :

Բազում յազգայնոց եւ յօտարաց — որոց փոքր ի շատէ յայտ է մեր անձնանուէր սէրն առ հայրենի փառս եւ դպրութիւնս, եւ մեր այս երկուց լեզուաց վրայ ունեցած ծանօթութեանը գիտակ են, կամ ականատես եղած են մեր բազմաշխատ խուզարկութեանցն ու գիւտիցը, եւ կամ մեր այս երկասիրութեանը քանի մը թերթը քննած են ու պէտք ունեցած՝ — շատ անգամ յորդորեցին զմեզ որ որչափ կարելի է շուտով հրատարակեմք զայս՝ տալագրելով բաժանորդութեամբ, որով եւ զոն ընեմք ազգիս ուսումնասիրները, եւ հայ դպրութեանց հետամուտ օտարազգիները :

Եւ ահա ի դոյն խնդիր եւ մեր հառանեալ՝ կառաջարկեմք այս մեր Բառգիրքը, որ ճոխագոյն իսկ է քան զամենայն հայ բառգիրս, եւ քան զամենայն ճշդագոյն եւ քան զամենայն դիւրացուցիչ թէ հայերէն եւ թէ գաղղիարէն լեզուները հասկընալու եւ սովրելու համար :

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

1° *Հայ-Գաղղիարէն* բառգրոց բաժանորդութեան գինն է 25 ֆրանք. իսկ բաժանորդ չեղողներուն պիտի վաճառուի 30 ֆր:

2° Դիրքը պիտի ըլլայ ութածալ. եւ գիրը՝ առաջիկայ յայտարարութեանս գիրովը:

3° Բաժանորդք քանի օրինակի համար որ գրուին՝ իրենց ստորագրութեամբը գինն ալ կանխիկ պիտի վճարեն :

4° *Հայ-Գաղղիարէն* բառգրոց բաժանորդութեան գործակալները *Մասեաց Աղաւնոյն* գործակալներն են : Կրնան բաժանորդք նաեւ կամ իրենց քաղքին ծանօթ գրավաճառի մը դիմել, կամ ուղղակի Փարիզ հասցունել առ մեզ թղթատարաւ,

Rue Violet, 60, *à Grenelle*. — PARIS.

5° Բաժանորդաց անունները եւ քանի օրինակի գրուած ըլլալնին պիտի առանձին ցանկով հրատարակուի :

un de sa langue en français; de même il n'est pas une école où l'on n'enseigne spécialement le Français.

Il n'est donc pas étonnant que notre nation aussi apporte un soin tout particulier à l'étude de cette dernière langue. C'est une conséquence inévitable de ses besoins comme aussi de la richesse littéraire de cette langue universelle, aliment de toutes les nations et à plus forte raison d'un peuple comme le nôtre affamé de connaissances. Mais pour l'apprendre, l'instrunment essentiel lui manque : c'est le *Dictionnaire*. Celui du Père Aucher avait certainement une valeur pour son époque; mais depuis longtemps les savants nationaux et étrangers ont reconnu que par ses défauts, ses erreurs nombreuses, non-seulement il est insuffisant, mais encore qu'il peut être nuisible à ceux qui apprennent les deux langues. Aussi tous cherchent et demandent un dictionnaire *Arménien-Français*.

Depuis quatre ans nous avons entrepris ce nouveau labeur; nous nous y sommes adonné avec tenacité pour satisfaire à ce désir de notre nation et des philarmènes. Avons-nous atteint notre but? Nous l'espérons; à ne considérer que la fin de notre œuvre, la fatigue et les veilles qu'elle nous a coûtées. Mais nous ne saurions nous réjouir et nous féliciter d'avoir mené à bien cette tâche pénible avant d'avoir pu la rendre accessible au public.

Un grand nombre de nos compatriotes et d'étrangers qui n'ignorent pas notre dévouement à la gloire et à la littérature de notre patrie, et la connaissance que nous avons acquise des deux langues, ou qui ont été témoins de nos pénibles efforts et de nos recherches, d'autres encore qui ont vu et examiné quelques feuilles de notre ouvrage, qu'ils ont voulu consulter, nous ont plus d'une fois engagé à le publier le plus tôt possible, en l'imprimant par souscription, et de satisfaire le vœu des gens de lettres de notre nation et des étrangers qui s'occupent de la littérature arménienne.

Nous nous empressons d'acquiescer à ce vœu et nous venons annoncer ici notre ouvrage, le plus riche de tous les Dictionnaires arméniens, le plus exact et le plus capable de faciliter l'étude et la connaissance et de la langue arménienne et de la langue française.

CONDITIONS DE LA SOUSCRIPTION.

1° Le prix de la souscription pour un exemplaire du Dictionnaire *Arménien-Français* sera de 25 fr.; pour les non-souscripteurs il sera porté à 30 fr.

2° Le format sera in-8 et les caractères conformes à ceux employés ici.

3° En signant leur engagement, les souscripteurs acquitteront le prix du nombre d'exemplaires pour lesquels ils auront souscrits.

4° On souscrit dans les bureaux de notre journal : *La Colombe du Massis*. Cependant les souscripteurs pourront avoir recours à un libraire de leur résidence ou nous adresser directement un mandat sur la poste, à notre domicile :

Rue Violet, 60, *à Grenelle*. — PARIS.

5° Les noms des souscripteurs et le nombre d'exemplaires que prendra chacun d'eux seront énoncés en tête de l'ouvrage.

ՏԵՐ ԵՒ Ա.Ղ.Ա. ԲԱ.ՌԵՐՈՒՆ ԴՈՐԾԱԾՈՒԹԵԱՆԸ ՎՐԱՑ.

Աղա բառին այլազգի ըլլալը յայտնի է ամենուն: Ուրիշ անգամ գուցէ առիթ ունենանք աւելի մանրամասն կերպով ցուցընելու թէ հրջափ անտեղի է տաճկաբնակ Հայոց այն սովորութիւնը, որ պատուոյ համար այս օտարախորթ բառը կուտան, երբ կրնային մեր սեպհական ազգային պատուական *Տէր* բառը տալ, եւ նոյնչափ եւ աւելի ալ բերեան պատիւ ընել, եւ ուրախացընել իսկ նոյն անձը՝ թէ որ ազգասէր որ է եւ ազգին լեզուին անխառն յատկութեանը վրէժխնդիր: Թէ որ այսպիսի պատուաւոր բառ մը չունենայինք եւ կարօտ ըլլայինք օտար լեզուի օգնութեանը,— ինչպես կրնամք երբեմն ունենալ,— քիչ մը կարդարանար այս տգեղ սովորութիւնը. բայց յայսմ մասին՝ ոչ երբեք:

Սովորութիւնն ու ժամանակը շատերուն վրայ այնպիսի խոր տպաւորութիւն մը ըրեր են, որ ոմանք *Տէր* բառը լսելուն պես՝ մէկեն անձը եկեղեցական կամ քահանայ կկարծեն: Այլք եւս *Տէր* բառին վրայ *Աղա* բառին նշանակութիւնը բոլորովին չեն գտներ, որ ըսել է՝ սովորած չեն, կամ նախապաշարեալ է մտքերնին:

Տէր ըսելով եկեղեցական միայն հասկընալու սովորութիւնը՝ վերջերը հաստատութիւն առած է, երբ աշխարհական ազգային իշխանութիւնը ընկեր եկեղեցականը միայն մնացեր է, եւ աշխարհականք այնուհետեւ տիրող ազգին սովորութեանցը հետ նաեւ անոնց տիտղոսներն ալ սկսեր են իրենց սեպհականել: Ասկիայ մեր ազգին ցաւալի ու պարսաւելի սովորութիւնն է միշտ, որով ամեն բանի մէջ ալ իր ունեցածը՝ յաւ. գէշ չնայիր՝ կանարգէ ու օտարինը կնախադասէ...:

